



ՄԵՐ ՀԱՅՐԵՐԸ ԿԸ ԽՕՄԻՆ... ՓՈՐՁՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ ՀԱՆԴԵՐՁ, ԴՈՒՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԿՈՉՈՒԱԾ ԵՍ

«Հոգեւոր մարդիկ կ'ենթարկուին խիստ փորձութիւններու, որոնց աղբիւրը սկզբնական մեղքն է»:

ԶԳԱՍՏՈՒԹԻՒՆԸ, ՍՐՏԻ ԽՈՆԱՐՀՈՒԹԻՒՆ ՈՒ ՇՆՈՐՀՔԻՆ ՆԱՆԱԽՆԱՄՈՒԹԻՒՆԸ

Մայր մը, որ մէկ հատիկ, գեղեցիկ, գիտուն, իմաստուն եւ ամէն տեսակ բարի յատկութիւններով զարդարուած զաւակ մը ունի, որուն վրայ նաեւ դրած է իր ամբողջ յոյսը, եթէ պատահի, որ այդ զաւակը մեռնի, ապա մայրը սաստիկ եւ անսահման տխրութեամբ եւ կսկիծով կը լեցուի, կու լայ, կ'ողբայ եւ ոչինչ կրնայ զինք մխիթարել: Նոյնպէս ալ միտքը պէտք է ցաւի, երբ հոգին Աստուծմէ հեռանալով՝ կը մեռնի: Պէտք է խոնարհ սիրտ ունենալ, միշտ վախի եւ զգաստ վիճակի մէջ ըլլալ եւ միաժամանակ ամէն բարիքի նկատմամբ յարատեւ անօթութիւն եւ ծարաւ ունենալ: Որովհետեւ Աստուած նման մարդիկը իր ձեռքերուն մէջ առնելով՝ հոգ կը տանի եւ կը յուսադրէ, որպէսզի կրկին չտխրին, այլ ցնծան եւ ուրախանան, յար եւ նման անոր, որ մեծ գանձ մը գտաւ, սակայն միաժամանակ կը վախնայ, որպէսզի գտածը չկորսնցնէ: Քանի որ գողերը շատ են եւ յարձակելու պատրաստ: Մարդու մը պէս, որ թէեւ գողերու յարձակումին ենթարկուելով մեծ վնասներ կրած է եւ դժուարութեամբ ալ անոնցմէ ազատած, սակայն որովհետեւ կրկին մեծամեծ հարստութեան տիրացած է, ուստի իր ներկայ վիճակին պատճառով նախնկին կրած վնասը չի շարունակեր իր վրայ ազդեցութիւն ունենալ: Այդպէս են նաեւ հոգեւոր մարդիկը, նախ վախազդու փորձութիւններու եւ դժուարութիւններու կ'ենթարկուին, սակայն երբ շնորհքով կը լեցուին եւ բարիքներով կը յորդին, ապա չեն վախնար անոնցմէ, որոնք իրենց մեծապէս առատ հարստութեանց պատճառով զիրենք կ'ուզեն կողոպտել: Կը վախնան ի՞նչ թէ չարէն վախցող սկսնակներու պէս, այլ ան վախով ու զգուշաւոր մտահոգութեամբ, թէ ի՞նչ ձեւով պիտի շահարկեն իրենց վստահուած հոգեւոր պարգեւները:

ՇՆՈՐՀՔԸ ՀՈԳԻՒՆ ՄԵՁ Կ'ԱՐՄԱՏԱՌԻՔ ԽՈՆԱՐՀՈՒԹԻՒՆԸ

Հոգեւորներէն մէկը ինքզինք ամէնէն մեղաւորը եւ նուաստը կը համարէ եւ այդ մտածումին վրայ կը կեդրոնանայ, մինչեւ որ ատիկա իր բնութեան մաս կազմէ, եւ իրքան յառաջանայ աստուածգիտութեան մէջ, այդքան աւելի ինքզինք տգէտ կը համարէ եւ իրքան սորվի, ինքզինք այնքան նուազ գիտուն կը նկատէ: Շնորհքն է, որ այդ ազդեցութիւնը կը կատարէ հոգիին վրայ եւ զայն իր բնութեան մէկ բաժինին կը վերածէ: Կը նմանի զօրեղ երիտասարդի մը, որ իր գիրկին մէջ մանուկ մը շալկած, ուր որ ինք կամի, հոն կը տանի զայն: Նոյնպէս ալ շնորհքը, հոգիին խորերը ըլլալով, այնտեղ կը գործէ եւ զայն իր ձեռքերուն վրայ ունենալով՝ դէպի երկինք կը բարձրացնէ, դէպի կատարեալ աշխարհն ու յափտենական հանգիստը:

**ՄԵԾՆ ՍՈՒՐԲ ՄԱԿԱՐ
«ՀՈԳԵՒՈՐ ՔԱՐՈՉՆԵՐ»**
Հայացուց՝ Մակար Արք. Աշգարեան
(Շարունակելի 5)


ՊԱՂԱՏԻՄՔ ԱՌ ՍՈՒՐԲ ԽԱՉ

Աստուած Ամենակարող, որ վասն իմոյ մեղացս մեռար ի վերայ խաչափայտին, լնր ընդ իս հանապազ աղաչեմ գրեզ:

- Սուրբ Խաչ Յիսուսի Քրիստոսի ողորմեա՛ ինձ:
- Սուրբ Խաչ Յիսուսի Քրիստոսի ողորմեա՛ ինձ:
- Սուրբ Խաչ Յիսուսի Քրիստոսի ողորմեա՛ ինձ:

- Հաս զիս զմեղաւորս ի ճանապարհ փրկութեան:
- Հաս զիս զմեղաւորս ի ճանապարհ փրկութեան:
- Հաս զիս զմեղաւորս ի ճանապարհ փրկութեան:

Ազատեա՛ եւ փրկեա՛ ի հոգեւոր եւ մարմնաւոր վտանգից, ճվ Խաչ Յիսուսի Նազովրեցոյն, զոր պաշտեմ յաւիտեան: Ողորմեա՛ ինձ եւ իալածեա՛ յինէն զչար ոգի, զի ի փախուստ լիցի յինէն յաւիտեանս յաւիտենից. ամէն:



Արտասուալից աչօք ի ծուր իջեալ աղերսեմ ի պատիւ անգին արեան Յիսուսի եւ ի պատիւ իւր մարդեղութեան: Որով կարող է առաջնորդել զմեզ ի կեանս յաւիտենականս եւ զոր խոստովանիմք եւ հաւատամք յայսմ ճշմարտութեանց այնպէս ինչպէս ստուգապէս Յիսուս ծնաւ եւ Ուրբաթ օր մեռաւ: Ամէն:

Խաչ քո եղիցի մեզ ապաւն, Տէր Յիսուս, յորժամ երեւիս փառօք Հօր ընդ ամպս լուսաւորս: Յայնժամ մեք մի ամաչեցուց ընդ աջմէ քումմէ՝ որպէս զորդիս լուսոյ եւ որդիս տուրնջեան:

ՀԱՍԿՆԱՆՔ ՄԵՐ ՊԱՏԱՐԱԳԸ ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Մեր Ս. Պատարագը այսօր կը ներկայանայ իբրեւ գեղեցիկ ու կատարեալ ամբողջութիւն մը, ինչպէս մեզի՝ այնպէս ալ օտարներուն համար: Եւ փաստօրէն, այդ օտարներէն մէկը, առիթով մը ներկայ ըլլալէ ետք մեր Պատարագի քառածայն շքեղ երգեցողութեան, ըսած է՝ թէ հիանալի համանուագ (օրաթորիօ) մըն է ան: Կարծեք մէկ հեղինակի ձեռքով, մէկ հզօր ներշնչումով ու բացառիկ ճաշակով յարդարուած գործ մը ըլլար:

Սակայն, ճշմարտութիւնը այն է, որ Պատարագը եկեղեցական որեւէ ուրիշ արարողութեան չափ, եւ թերեւս բոլորէն աւելի, փոփոխութեանց, կամ աւելի ճիշդ՝ աստիճանական զարգացման ենթարկուած է:

Դժուար ու երկար պիտի ըլլար այդ բոլոր փոփոխութեանց մանրակրկիտ պատկերը ներկայացնել: Բայց շատ հպանցիկ ձեւով մը կարելի է հետեւեալ քանի մը հանգրուանները ուրուագծել.-

1. Քրիստոսի կողմէ հաստատուեցաւ Խորհուրդը՝ իր պարգագոյն ձեւով ու բառերով: (Տե՛ս Մտ 26.17-30, Մր 14.12-26, Ղկ 22.7-20, Ա. Կր 11.23-29):

2. Առաքեալները ուր որ գացին՝ «Հացի բեկանումը» կատարեցին: Անշուշտ, այդ արարքէն առաջ, անոնք պատմեցին չարչարանքներու եւ խաչի մահուան նախօրեակին Քրիստոսի Վերջին Ընթրիքը, վերադարձուելով Քրիստոսի արտասանած բառերը, այնպէս՝ ինչպէս դրոշմուած էին իրենց մտքերուն մէջ: Հացի բեկանումը անշուշտ կը կնքուէր գոհաբանական աղօթքով եւ հաւանաբար՝ գոհաբանական մէկ-երկու Սաղմոսով:

3. Առաքեալներէն ետք, տեղական իւրաքանչիւր եկեղեցի շարունակեց Ս. Պատարագը կատարել իր այդ պարգագոյն ձեւին մէջ: Պատարագողը կ'ըլլար տեղւոյն Եպիսկոպոսը, այսինքն՝ տեղական եկեղեցիին վերատեսուչը, իսկ երէցները կամ քահանաները, եթէ կային, անոր կողքին կանգնած կը սպասարկէին: Այն բանաձեւը, որ առաքեալներէն ստրված էին, կը կրկնէին գրեթէ բառացի, կամ թեթեւակի ազատութեամբ մը: Շուտով, երկրորդ դարու սկիզբներէն, այդ բանաձեւերը գրի առնուեցան, ասանդութիւնը աւելի ամուր պահելու համար: Բայց պարտադիր չէր անպայման այդ բանաձեւը կրկնել: Այն Եպիսկոպոսները, որոնք շնորհքը ունէին ազատ կերպով աղօթելու, անոնք իրենց բառերով եւ իմաստի նոր ճոխացումներով կրնային խորհուրդը կատարել:

4. Պատարագի խորհուրդը 3-րդ եւ 4-րդ դարերուն նոր զարգացումներ ապրեցաւ: Սկզբնական մէկ եւ միակ աղօթքը շրջանակուեցաւ ուրիշ աղօթքներով, խնդրանքներով, մաղթանքներով, յիշատակութիւններով, գոհաբանական բառերով կամ երգերով: Առաքեալական ծագում ունեցող տարբեր եկեղեցիներու մէջ կը տեսնենք երեան գալը տարբեր Պատարագներու, որոնք նոյն կորիզը ունենալով հանդերձ՝ իրենց զարգացման մէջ շատ տարբեր են իրարմէ:

Այսպէս օրինակ՝ 3-րդ դարուն արդէն Երուսաղէմի մէջ մշակուած էր Պատարագ մը, որ կը կրէ Յակոբոս Առաքեալի անունը: Մշակումը Առաքեալինը չէ անշուշտ, բայց անոր կորիզը կու գայ նոյնիքն Առաքեալէն, որ Երուսաղէմի եկեղեցիին առաջին Եպիսկոպոսն էր: Արեւելքի բոլոր Պատարագներուն ալ սկզբնաղբիւրը Ս. Յակոբոս առաքեալի այս Պատարագն է:

Եգիպտոսի մէջ՝ Աղեքսանդրիա, յառաջ եկաւ ուրիշ Պատարագ մը, որ այդ եկեղեցիին հիմնադիր առաքեալին՝ Ս. Մարկոսի անունով կը կոչուի: Արեմուտքը ունեցաւ իր Պատարագները, որոնք զիրենք խմբագրող Եպիսկոպոսներուն կամ եկեղեցիներուն անունով ճանչցուեցան (Ամբրոսեան Պատարագ, Կելասեան Պատարագ, Գրիգորեան Պատարագ, Գաղղիական Պատարագ, եւլն.): Արեւելքի Պատարգներու մշակման ամէնէն բեղմնաւոր դաշտը եղաւ Կապադովկիան, ուր Ս. Բարսեղ Կեսարացի մշակեց ու խմբագրեց իր անունով ծանօթ Պատարագը, սկզբնաղբիւր ունենալով Ս. Յակոբոս Առաքեալի Պատարագը: Իսկ Ս. Գրիգոր Նազիանզացի՝ «Աստուածաբան» մականուանուած, Պատարագի չորս տարբեր խմբագրութիւններ հրատարակեց:

Անտիոքի առաքելական այթողին տիեզերահռչակ հայրապետը՝ Ս. Յովհան Ոսկեբերան, ինք եւս Բարսեղ Կեսարացիի խմբագրած Պատարագը նոր մշակումի ենթարկելով, խմբագրեց Պատարագ մը, որ ցարդ Յոյն կամ Բիզանդական բոլոր եկեղեցիներուն մէջ գործածուող սովորական Պատարագն է:

Վերոյիշեալ անուններէն ոմանք կարելոր են մեզի համար, որովհետեւ սերտօրէն կ'առնչուին մեր Պատարագի պատմութեան:

**«ՀԱՍԿՆԱՆՔ ՄԵՐ ՊԱՏԱՐԱԳԸ»
ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳԻ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ,
ԿԱՌՈՅՑԸ, ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ
ԶԱՐԵՀ ԱՐՔ. ԱԶՆԱՌՈՐԵԱՆ**





ՀԱՍԿՆԱՆՔ ՄԵՐ ՊԱՏԱՐԱԳԸ ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

5.- Ի՞նչ էր կացութիւնը Հայաստան աշխարհի մէջ: Պէտք է գիտնալ, որ եթէ այսօր մէկ եւ միակ Պատարագ մը ունինք մեր բոլոր եկեղեցիներուն մէջ, այդպէս չէր սակայն 4րդ եւ 5րդ դարերուն: Կարելիութիւնը չունինք խօսելու Ս. Գրիգոր Լուսաւորիչէն առաջ տիրող կացութեան մասին: Բայց 4րդ դարը կը բացուի Ս. Գրիգոր Լուսաւորիչով եւ մեր եկեղեցոյ ծիսական ու նուիրապետական կազմակերպումով:

Լուսաւորիչ հայրապետը Կապադովկիայէն ու Եդեսիայէն իրեն հետ բերաւ իջ միայն քարոզիչներ, այլ վստահաբար նաեւ ծիսական-պաշտամունքային եւ աստուածաբանական երկեր, որոնք Յունարէն եւ Ասորերէն էին հարկաւ: Ծիսական գիրքերու կարգին պիտի ըլլային բնականաբար Պատարագը եւ ժամակարգութեան բաժիններ:

Ս. Գրիգոր ի՞նչ Պատարագ բերաւ Կեսարիայէն, դժուար է ըսել: Հայր Վարդան Հացունի կը յայտարարէ՝ թէ «Առաջին Պատարագամատոյցը, որ Հայաստանեայց եկեղեցին գործածեց, Ս. Բարսեղ Կեսարացիին գրածն էր»: Բայց որոշապէս ասիկա ճիշդ չի կրնար ըլլալ: Ս. Գրիգոր Լուսաւորիչի ժամանակ տակալին Ս. Պատարագի Բարսեղեան խմբագրութիւնը գոյութիւն չունէր:

Հայր Յովսէփ Գաթրճեան՝ Հայոց Պատարագամատոյցին մեծագոյն ուսումնասիրողը, կ'ենթադրէ, որ մինչեւ 4րդ դարու վերջին քառորդը, այսինքն մինչեւ Բարսեղ Կեսարացիի Պատարագին Հայստան բերուիլը, նախա-Նիկիական Պատարագներէն մէկը կը գործածուէր Հայաստանի մէջ: Այդ մէկը, ամենայն հաւանականութեամբ՝ Ս. Յակոբոս Առաքեալի Պատարագն էր, կամ՝ Ասորերէն Պատարագ մը, որ սակայն Հայերէնի չթարգմանուեցաւ 5րդ դարուն մեր մէջ գործածուածը անիկա եղաւ:

4րդ դարու վերջին քառորդին էր, որ Ս. Բարսեղ Կեսարացիի եւ Ս. Գրիգոր Նազիանզացիի չոր Պատարագները մուտք գործեցին Հայաստան: Նազիանզացիի Պատարագի խմբագրութիւններէն չորրորդը, որ շփոթումով վերագրուած է Ս. Աթանաս Աղեքսանդրիացի հայրապետին, աւելի մեծ ընդունելութիւն ու տարածում գտաւ Հայաստանի մէջ:

5րդ դարուն այս երեք Պատարագներն ալ (Յակոբոս Առաքեալի, Բարսեղ Կեսարացիի, Գրիգոր Նազիանզացիի) մեր երկրին մէջ կային, եւ ասոնց վրայ շուտով աւելցաւ նաեւ Յովհան Ոսկեբերանի խմբագրածը:

Պատարագամատոյցին հայացումը անշուշտ տեղի ունեցաւ 5րդ դարուն: Միայն կրնանք ենթադրել, որ կարգ մը մասեր բերանացի թարգմանուած էին դեռ 4րդ դարէն: Բայց, հիմնական եւ ամբողջական թարգմանութիւնները կատարուեցան 5րդ դարուն: Պատարագի հայացումը կատարուեցաւ Ս. Յովհան Մանդակունի հայրապետին ձեռքով: Հայացում ըսելով, պարզապէս Յունարէն բնագիրներուն թարգմանութիւնը չենք հասկնար: Մանդակունի հայրապետ իջ միայն համարեց Բարսեղ Կեսարացիի, Գրիգոր Նազիանզացիի եւ Յովհան Ոսկեբերանի Պատարագները, այլ նաեւ որոշ պատշաճեցումներ ու լրացումներ կատարեց, որոնք եկան Պատարագի բնագրին հայկական դրոշմ մը տալու:

6.- Յովհան Մանդակունիի ձեռքով խմբագրուած Պատարագամատոյցը իր հիմնական ձեւով պահուեցաւ յաջորդ դարերուն, ինչպէս ունինք վկայութիւնը 10րդ դարուն՝ Խոսրով Անձեացեաց Եպիսկոպոսի մեկնութենէն:

7.- 12րդ դարուն Պատարագամատոյցը նոր եւ զգալի փոփոխութիւններ կը կրէ, Ս. Ներսէս Շնորհալիի եւ Ս. Ներսէս Լամբրոնացիի կողմէ:

Լամբրոնացիի բերած հիմնական փոփոխութիւնը, Պատարագի մուտքի բաժինին յաւելումն էր անոր վրայ: Այսինքն՝ նկատի ունինք պատարագիչին զգեստաւորման աղօթքները, ապա եկեղեցի մուտքը, խորանին առջեւ ձեռքերու լուացումը, մեղքերու խոստովանութիւնը, 26րդ Սաղմոսին արտասանութեամբ խորան բարձրանալը, եւ ի վերջոյ, թափօր դառնալը: Անոնք ուղղակիօրէն առնուած են ժամանակի Լատինական Պատարագէն, որ Լատին կրօնաւորներ իրենց հետ բերած էին Արեւելք, եւ կը գործածուէին Անտիոքի ու շրջակայքին մէջ, ինչպէս նաեւ նորահաստատ Լատինական վանքերու մէջ:

Լամբրոնացի ինք Լատինական այդ Պատարագը թարգմանեց Հայերէնի, եւ հաւանաբար գեղեցիկ գտաւ անոր մուտքի բաժինը, որ որդեգրեց, եւ այնուհետեւ անիկա պահուեցաւ մեր Պատարագին մէջ:

8.- 13րդ դարուն է, որ Պատարագին սկիզբը կ'աւելնայ զգեստաւորման երգը՝ «Խորհուրդ Խորին»ը, Խաչատուր Վրդ. Տարօնացիի հեղինակութեամբ:

9.- Այն նոյն դարերուն (12-15) է, որ Պատարագին լրացուցիչ տաղեր ու մեղեդիներ կը յօրինուին, մեծ մասամբ մեզի անծանօթ մնացած հեղինակներու կողմէ:

10.- Պատարագին վրայ վերջին յաւելումները կու գան 17րդ եւ 18րդ դարերէն: 17րդ դարուն Պատարագի աւարտին աւելցաւ Աւետարանի ընթերցումը, որ նախապէս չկար եւ Լատինական ազդեցութեամբ ներս սողոսկեցաւ, չենք ալ գիտեր որրին կողմէ:

Իսկ վերջին յաւելումը, 18րդ դարու երկրորդ կէսէն եկող, «Տէր Ողորմեա»ն

Իսկ վերջին յաւելումը, 18րդ դարու երկրորդ կէսէն եկող, «Տէր Ողորմեա»ն է: Սա հեղինակութիւնն է Սիմէոն Երեւանցի Կաթողիկոսին (1763-1780), եւ թէպէտ սկզբնապէս գրուած չէր եկեղեցական արարողութեանց մաս կազմելու համար, բայց այնքան սիրուեցաւ մանաւանդ ժողովուրդին սրտին դպաւ, որ աստիճանաբար մտաւ արարողութեանց կարգին եւ ի վերջոյ՝ նաեւ Պատարագին: Թէ էր, ճշգրիտ կերպով չենք գիտեր:

(Շարունակելի 2)
«ՀԱՍԿՆԱՆՔ ՄԵՐ ՊԱՏԱՐԱԳԸ»
ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳԻ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ
ԿԱՌՈՅՑԸ, ԲՈՎԱՆԴԱՎՈՒԹԻՒՆԸ
ԶԱՐԵՀ ԱՐՔ. ԱԶՆԱՌՈՐԵԱՆ

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ

ԻՆՉՈ՞Ւ ՊԷՏՔ Է ԵՐԿՐՊԱԳԵԼ:

«Երկրպագել» կը նշանակէ մինչեւ գետին խոնարհիլ եւ զԱստուած փառաւորել: Երկրպագութիւնը երբ կը կատարուի Ամենասուրբ Երրորդութեան անունով, անիկա կը խորհրդանշէ փառաւորում եւ պաշտամունք Սուրբ Երրորդութեան երեք Անձերուն: Իսկ երբ անիկա կը կատարուի ի դէմս սուրբերուն, ատիկա կը խորհրդանշէ յարգանք ու ականածանք անոնց ապրած վարքին դիմաց:

Պէտք է երկրպագել ամէն անգամ, երբ Ս. Պատարագի ընթացքին սարկաւազը կը հրաւիրէ բոլոր հաւատացեալները, հոգեւորական թէ աշխարհական, Աստուծոյ դիմաց խոնարհելով երկրպագելու՝ «Աստուծոյ երկրպագեսցուք»: Երկրպագելէ ետք պէտք է երեսը խաչակնքել:

Երկու ձեւով կարելի է երկրպագել. գլուխը խոնարհեցնելով եւ ծնրադրութեամբ: Այս երկրորդը կը կոչուի նաեւ՝ ծնրադիր երկրպագութիւն, որ յատկապէս կը կատարուի առանձնական աղօթքի ընթացքին: Նիկիոյ Տիեզերական Առաջին Ժողովը (325 թ.) կանոն կը սահմանէ Կիրակի օրերը ծնրադրելով չերկրպագել, այլ՝ Աստուծոյ երկրպագել կանգնած: Ատով՝ պատուած կ'ըլլանք Կիրակի օրուան խորհուրդը, որովհետեւ այդ օրը Յիսուս յարութիւն առաւ եւ մարդոց յարութիւն տուաւ, այլ խօսքով՝ ոտքի կանգնեցուց մեղքերէն:

ԻՆՉ Է ԱՆԴԱՍՏԱՆԸ:

Անդաստանը աշխարհի չորս ծագերը օրինելու Հայ եկեղեցոյ յատուկ արարողութիւն մըն է, ուր կը խնդրուի Աստուծմէ՝ արտերու պտղաբերութիւն եւ արգասաւորութիւն տայ:

Հնուց անդաստանի արարողութիւնը կատարուած է եկեղեցիէն դուրս՝ արտերու եւ այգիներու մէջ, ինչպէս որ այսօր տեղ-տեղ կը կատարուի, բայց առիասարակ կը կատարուի եկեղեցոյ Ատեանին մէջ:

Արարողութեան ժամանակ հոգեւորականաց դասը խաչով, խաչվառով ու Աւետարանով նախ կ'օրինէ Արեւելքը եւ այնտեղ գտնուող Հայոց Հայրապետութիւնն ու Հանրապետութիւնը, Ս. խաչին եւ Ս. Աւետարանին նշանով՝ յանուն Ամենասուրբ Երրորդութեան: Ապա կ'օրինուի Արեւմուտքը եւ այնտեղ գտնուող քրիստոնեայ բոլոր թագաւորութիւններն ու ազգերը: Հարաւէն կ'օրինուին երկիրները, անդաստանները եւ տարուան պտղաբերութիւնն ու հունձքը: Իսկ Հիսիսէն՝ վանքերը, անապատները՝ անմարդաբնակ վայրերը, քաղաքներն ու գիւղերը եւ անոնց բնակիչները:

Տէր Տաթեւ Աւ. Քինյ. Միքայէլեան

ԵԿԵՂԵՑԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ

Եկեղեցին Հայկական, ծննդավայրն է հոգւոյս, Ինչպէս քարայր մ'ընդարձակ, պարզ ու խորունկ, մութ ու լոյս... Իր գաւիթով հիւրընկալ, իր լայն բեմով, ու հեռուն, Կանգնած իր լուռ խորանով, որ կարծես նաւ մ'է ծրփուն...

Եկեղեցին Հայկական եւ աչքքս գոց կը տեսնեմ, Ու կը շնչեմ, կը լսեմ՝ իր Յիսուսով մանկադէմ, Իր սեղանէն մըլխացող, գուլայ – գուլայ խունկերով, Եւ իր պատերը ցնցող աղօթքներով ալեխռով...

Եկեղեցին Հայկական բարձր բերդն է հաւառքին Իմ պապերուս, որ հողէն զայն քար առ քար հանեցին Եւ երկինքէն իջուցին զայն ցօղ առ ցօղ , ամպ առ ամպ Ու թաղուեցան անոր մէջ հանդարտութեամբ, հեզութեամբ...

Եկեղեցին Հայկական մեծ վարագոյր մ'է բանուած, Որուն ետեւ, սրկիիին մէջ, կ'իջէ ինքը Աստուած, Որուն առջեւ գլխահակ կու գայ իմ ազգըս ամբողջ Հաղորդւիլ Անցեալին հաց ու գինով կենսառողջ...

Եկեղեցին Հայկական ծովուն դիմաց ալեկոծ Նաւահանգիստ մ'է խաղաղ. ցուրտ գիշերին՝ հորւ եւ բոց. Ու տօթակէզ ցերեկին անտառ մըն է ըստուերոտ, Ուր շուշաններ կը ծաղկին Շարականի գետին մօտ...

Եկեղեցին Հայկական մէն մի քարին տակ գետնի Դէպի երկինք բարձրացող գաղտնի ճամբայ մը ունի... Եկեղեցին Հայկական Հայ Հոգիին եւ Մարմնոյն Զըրահանդերձ է փայլուն, մինչ իր խաչերն են դաշոյն

Եւ զանգակներն են բոմբին, եւ երգն է միշտ յաղթութիւն...:

ՎԱՀԱՆ ԹԵՔԷԵԱՆ





ՆԻԿԻՈՅ ՏԻԵՋԵՐԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԺՈՂՈՎԻ 1700-ԱՄԵԱԿ

«ԵՒ Ի ՄԻ ՏԵՐ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ ՅՈՐԴԻՆ ԱՍՏՈՒԾՈՅ, ԾՆԵԱՆՆ ՅԱՍՏՈՒԾՈՅ ՀՕՐԷ, ՄԻԱԾԻՆ, ԱՅՍԻՆՔՆ՝ ՅԵՌԻԹԵՆԷ ՀՕՐ»:

1.- Բանն Աստուած:

Յովհաննէսի Աւետարանը «Բան» կը կոչէ Աստուծոյ Որդին (Յի 1.1, 14: Հմմտ Ա.Յի 1.1): Քրիստոնէական գրականութեան մէջ յաճախ Որդիին մասին կը խօսինք, զայն անուանելով Բանն Աստուած, կամ՝ Աստուած Բանը, որովհետեւ Յովհաննէսի Աւետարանը յստակօրէն կ'ըսէ. «Սկիզբէն էր Բանը, եւ Բանը Աստուծոյ քով էր, եւ Աստուած էր Բանը»: Նիկիական հանգանակին մէջ այս բացատրութիւնը չկայ, թերեւս առիթ չտալու համար այն շփոթին, որ Արիոս Աղեքսանդրացի եւ իր հետեւորդները ունէին (տես վարը, 2.3):

2.- Մէկ Տէր:

Ա.- Աստուած մէկ է: Հետեւաբար մէկութիւնը յատուկ է ամենասուրբ Երրորդութեան անձերէն իրաքանչիւրին եւ երեքին միասնաբար: Այդ իմաստով, «Մէկ Տէր» բացատրութիւնը որոշակիօրէն Քրիստոսի աստուածութիւնը ընդգծելու նպատակ ունի:

Բ.- Յիսուս Քրիստոս միակ Տէրն է, ճշմարիտ Տէրը, տարբեր՝ բոլոր միա տէրերէն, որոնք ճշմարտապէս տէր չեն: Անիկա «տէրերու Տէրը եւ թագաւորներու Թագաւորը» (Յյտ 17.14, 19.16), եւ բոլորէն վեր եղող Աստուածն է (Հռ 9.5: Հմմտ Ա.Տմ 6.14-16):

Գ.- Անիկա նոյն եւ մէկ յափտեանական Բանն էր, որ աշխարհ գալով մարմնացաւ:

Դ.- Մէկ եւ նոյն Տէր Յիսուս Քրիստոսի երկու բնութիւններուն, այսինքն՝ աստուածութեան եւ մարդկութեան միջեւ բաժանում չկայ: Քրիստոս աստուածային եւ մարդկային կատարեալ բնութիւններուն սքանչելի միութիւնն է, առանց շփոթելու մէկը եւ միւրը, բայց նաեւ առանց երբեք բաժնելու ինչ որ յատուկ է Յիսուս Քրիստոսի աստուածամարդկային միատրեալ մէկ բնութեան:

3.- «Տէր» կոչումը, անոր գործածութիւնը եւ իսկական նշանակութիւնը:

«Տէր»ը միայն տիտղոս մը չէ, Աստուածաշնչական հասկացողութեամբ, այլ նաեւ՝ անուն մըն է, Աստուծոյ անունն է: Այն անունն է, որ յայտնուեցաւ Մովսէս մարգարէին (Ել 3.14-15), եւ որով լեցուն են Հին եւ Նոր Կտակարանները: Այդ անունը, Եբրայերէն ծնուով՝ «Եահուէ» (կամ «Եհովա»), առհասարակ բոլոր միւս լեզուներուն մէջ թարգմանուած է «Տէր» բառով: Արդարեւ, իրարմէ տարբեր չեն Եահուէն եւ Յիսուս Քրիստոսը: «Եահուէ» անունը յատուկ է Աստուծոյ, Սուրբ Երրորդութեան երեք անձերուն հաւասարապէս, եւ մարմնացեալ ու մարդացեալ մեր Փրկիչը ինք ալ Տէր է, այսինքն՝ Եահուէ Աստուածը (տե՛ս, օրինակ, Յի 12.37-41 եւ հմմտ Ես 6.1-10): Նոր Կտակարանը միշտ այսպէս՝ Տէր կը կոչէ Որդին, Յիսուս Քրիստոսը, անոր մէջ տեսնելով Որդիին աստուածութիւնը, հաւասար Հօրը եւ Սուրբ Հոգիին: Ուստի «Տէր» անունին մէջ կը տեսնենք ո՛չ միայն Յիսուս Քրիստոսի իշխանութիւնը եւ տիրութիւնը ամբողջ ստեղծագործութեան եւ մեր վրայ, այլ նաեւ կը տեսնենք անոր աստուածութիւնը, որ կը դաւանինք եւ կը հռչակենք՝ իբրեւ հիմը մեր փրկութեան:

4.- Յիսուս Քրիստոս:

«Յիսուս» Եբրայերէն անուն մըն է, որ կը նշանակէ՝ «Տէրը կը փրկէ»: Յիսուսի անունն իսկ կը յայտնէ իր փրկագործական առաքելութիւնը, որ քրիստոնէական եկեղեցին խտացուցած է միակ բառի մը կամ տիտղոսի մը մէջ. «Փրկիչ»: Ա՛ն է մեր ազատարարը՝ մեղքին եւ Չարին ծառայութենէն: Յիսուս իր անձը փրկանք տուաւ մեր բոլորին փոխարէն, մեզ մեղքի ծառայութենէն գնելու համար (տե՛ս Ատ 20.28, 26.28: Մր 10.45: Ա.Տմ 2.6: Եբր 9.28):

«Քրիստոս»ը անուն չէ, այլ՝ տիտղոս մը: «Քրիստոս» Յունարէն բառ մըն է, որ կը նշանակէ՝ Օծեալ: Ասիկա համապատասխանն է Եբրայերէն «օծեալ» (Եբր. «մաշի՛ աի», կամ մեզի համար սովորական դարձած կերպով՝ «մեսիա») բառին կամ տիտղոսին, որ կը տրուէր թագաւորներուն, քահանաներուն եւ մարգարէներուն: Յիսուս Օծեալ կը կոչուի, նախ՝ որովհետեւ իր մարդկութեան մէջ յղութեան պահէն իսկ ամբողջապէս Սուրբ Հոգիով լեցուեցաւ (Մտ 1.18: Ղկ 1.35), Սուրբ Հոգիով աճեցաւ ու զօրացաւ (Ղկ 1.80), անով առաջնորդուեցաւ (Մտ 4.1: Մր 1.10-12): Այդ իմաստով ալ, Յիսուս իր երկրաւոր ամբողջ առաքելութեան ընթացքին ամբողջապէս ունէր Աստուծոյ Հոգին (Յի 3.34), որովհետեւ Որդին ինք անբաժան է Սուրբ Հոգիին, ինչպէս անբաժան է Հօրմէն:

5.- Որդի Աստուծոյ:

Քրիստոս «Աստուծոյ Որդի է» կը յայտարարէր Նոր Կտակարանը (Մտ 3.17: Ղկ 1.35: Հռ 1.4: Ա.Յի 5.5): Բայց ինչպէս պէտք էր հասկնալ այդ որդիութիւնը: Ոմանք զայն կ'ուզէին հասկնալ այնպէս՝ ինչպէս է մեր որդիութիւնը Աստուծոյ: Բայց մինչ մենք Հօրը բնութենէն չենք, եւ Աստուծոյ որդի կը դառնանք իբրեւ մեզի պարգետուած բացառիկ շնորհք մը, որդեգրուելով Հօրը կողմէ, Յիսուս ինք Աստուծոյ համար որդեգիր մը չէ, այլ հարազատ որդի, Հօրը բնութենէն ծնած անժամանակ կերպով: Այդպիսի աղանդամիտ մտածող մըն էր Արիոս Աղեքսանդրացի, որ Յիսուս Քրիստոսը կը նկատէր պարզ արարած մը, որ սակայն Հօրը կամքին իր ամբողջական հնազանդութեամբը արժանի եղաւ փառքի եւ Աստուծոյ որդի կոչումին: Այս որդիութիւնը Արիոսի համար ճիշդ Աստուծոյ կողմէ մեր որդեգրութեան կը նմանէր:

6.- Հօրը Միածինը, անոր էութենէն ծնած:

Հաւատամքը զօրեղապէս կը պատասխանէ Արիոսի սխալ մտածողութեան, շեշտելով՝ թէ Յիսուս Քրիստոս, ճշմարտապէս Աստուծոյ Որդին է, Հօրը բնութենէն ծնած: Անիկա բացառիկ եւ եզակի ծնունդ մըն է, Հօրը միա՛կ ծնունդը: Ատոր համար ալ Աստուածաշունչը զայն կը կոչէ «Միածին» կամ «միածին Որդի» (Յի 1.14, 3.16): Արդ, եթէ Որդին Աստուծոյ միակ ծնունդն է, ճշմարտապէս Հօրը Որդին է (Բ.Յի 3), եւ Հօրը էութենէն է, այսինքն՝ Հօրը հետ մէկ եւ նոյն է (Յի 10.30), եւ իր մէջ ունի «աստուածային բնութեան ամբողջ լիութիւնը» (Կղ 2.9), կը նշանակէ՝ թէ ան կատարեալ Աստուած է:

7.- Համագոյակից եւ արարչակից Հօրը:

Նիկիոյ ժողովին կողմէ գործածուած բառն է՝ «համագոյակից», որ կը նշանակէ՝ Հօրը հետ նոյն էութենէն (էակից), նոյն գոյութենէն (գոյակից), այսինքն՝ նոյն բնութենէն (բնութենակից): Ասիկա պարզապէս նպատակ ունի հաստատելու Քրիստոսի կատարեալ աստուածութիւնը. ո՛չ թէ արարած, այլ՝ արարիչ ըլլալը, որով նաեւ Հօրը արարչակից է:

8.- Որդի կոչումը՝ աստուածութեան եւ ապագայ եկեղեցւոյ Ընտանիքին յարաբերաբար:

Յիսուս Քրիստոս ո՛չ միայն Աստուծոյ Որդին է՝ իբրեւ Աստուծոյ բնութենէն ծնունդ, այլ նաեւ Որդի է՝ յարաբերաբար մեզի: Ինքն է մեր ստեղծիչը, որ իր պատկերով ստեղծեց մեզ (Ծն 1.26-27), որպէսզի մենք եւս Աստուծոյ որդիներ ըլլանք որդեգրութեան ճամբով: Այս նպատակով ալ անիկա երկրի վրայ եւս ծնաւ իբրեւ որդի (Մտ 1.23: Հմմտ Ես 9.6), եւ ամէն ինչով մեզի նման եղաւ՝ բացի մեղաւորութենէն (Եբր 4.15: Ա.Յի 3.5), որպէսզի մեր եղբայրը դառնայ (Եբր 2.11), մեռելներէն առաջին ծնունդը ըլլայ (Կղ 1.18), եւ Աստուծոյ ընտանիքին մէջ առնէ մեզ, ինքը «բազմաթիւ եղբայրներու մէջ անդրանիկը ըլլալով» (Հռ 8.29):

ՄԵԿԼՈՒԹԻՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ
ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՀԱՌԱՄԱՔԻՆ
Զարեհ Արք. Ազնաւորեան
(Շարունակելի 4)

THE BOOK OF EZRA


WRITTEN: AROUND 400-300BC

WHAT YOU NEED TO KNOW:

The book of Ezra records some pretty significant events in the history of God's people. Earlier in the Bible, we read that there was a temple in Jerusalem, which was extremely important to the Judeans (people of Judah). The temple was destroyed when those people were exiled to Babylon. Years later, the Persians conquered the Babylonians, and this is where Ezra starts, The book tells how the Judeans were permitted to return to Jerusalem to rebuild the temple (under the guidance of Zerub-babel) but faced opposition when trying to do so. It goes on to show Ezra reorganizing religious life and encouraging the people to place their focus firmly back to God.

WHY READ IT?

Here, we can read all about the importance of putting God first and coming back to him if we have fallen away. Ezra shows us how God re-stores what has been broken and fulfils all his promises.



THE LETTERS 2 TIMOTHY

WRITTEN: AD61-64
(OR POSSIBLY LATER IN THE FIRST CENTURY)

WHAT YOU NEED TO KNOW:


This letter is a bit different from the others, as it was written to a person rather than a church. Timothy was a young leader who was put in charge of a church in Ephesus after Paul became concerned about its original leaders – so Timothy was mentored by Paul before going on to lead a church himself. This is a letter in which the wisdom of age is speaking to the passion of youth.

WHY READ IT?

Timothy was a young leader, and this letter gives advice for young people about building good character and knowing the truth. There is also some great advice on how to lead, both in general terms and specifically about dealing with difficult church situations.

WHAT YOU NEED TO KNOW:

Timothy was the son of a Greek father and a Jewish mother. He was mentored by Paul until he was entrusted with the leadership of the church in Ephesus. In the letters that Paul wrote to him, Paul seems to be cheering him on from afar.



THE BIG ISSUES AND WHAT THE BIBLE SAYS ABOUT THEM

WORRY & ANXIETY

Worry and anxiety are emotions that every single human being experiences. They're normal responses to many situations we face in life, such as exams or loved ones falling ill. However, when worry and anxiety begin to impact our everyday lives, influence our behaviour and take over our thoughts, they can become a problem. God doesn't want our lives to be ruled by worried thoughts but by things like peace, hope and joy. The Bible says that God cares about us and that we can go to him about every single one of our cares. Even in the times we feel super-overwhelmed and fearful, God is with us.

KEY BIBLE VERSES:
MATTHEW 6.25-34; PHILIPPIANS 4.6-7; 1 PETER 5.7;
PSALM 23.4



Ազգային Առաջնորդարան
Armenian Prelacy of Canada
Prélature Arménienne du Canada



514-856-1200
prelacy@armenianprelacy.ca
www.armenianprelacy.ca



Խմբագիր՝ Հոգեշնորհ S. Յակոբ Վրդ. Եազուպեան
3401 Olivar Asselin Montréal, Quebec H4J 1L5